

ՍՈՆԻԱ ՊԱԼԱՍԱՆԵԱՆ

ԳՈՒՅԵ  
ԵՂԵԼ  
ԽԵՆԱԳԱ  
ՍՈՍՈՐԵ

Սոնիա Պալասանեան (Ամիրեան)  
Բանաստեղծ - Նկարիչ  
Ծնել է 1942 թին Իրանում

1971 թից 1976-ը մասնակցել է Իրանահայ «Նոր Էջ» գրական խմբակցությանը  
Բանաստեղծությունները հրատարակել են հետեւեալ պարբերականներում՝  
«Շիրակ» ամսագիր, թիւ 9, 1972 եւ թիւ 9-10, 1973, Բէլրոս, Լիբանան  
«Նոր Էջ» գիրք գրականութեան, թիւ 18, 1975, Թեհրան, Իրան  
«Քաթրա» պարբերական, թիւ 5, 1976, Փարիզ, Ֆրանսիա  
«Սովետական Հայաստան» ամսագիր, թիւ 9 (430), Երեւան, Հայաստան  
Սոյն հատորի բանաստեղծությունները գրել են 1966-ից 1982 ժամանակաշրջանում

THERE MIGHT HAVE BEEN AN INSANE HEART  
Selected Poems in Armenian Language  
by  
SONIA BALASSANIAN

Copyright © by Sonia Balassanian, 1982

Library of Congress Catalog Card Number: 82-90282

International Standard Book Number: 0-9608388-0-5

Printed in the United States of America by  
AR Graphics, a Division of the Armenian Reporter, Inc.  
62-37 Woodhaven Blvd., Rego Park, N.Y. 11374 U.S.A.

Published by:  
Sonia Balassanian, 81 Murray Street, New York, N.Y. 10007, U.S.A.

Ներում եմ ծնողներին՝ Նազիկ եւ Ամիր Ամիրյաններին

ՍՈՆԻԱ ՊԱԼԱՍԱՆԵԱՆ

ԳՈՒՑԷ ԵՂԵԼ Է ԽԵԼԱԳԱՐ ՄԻ ՍԻՐՏ

ՀԱՏԸՆՏԻՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԻԻ ԵՈՐՔ  
1982

ԵՐԳԻՐ, ԵՐԳԻՐ, ՄԱՐԴ	12
ՆԱ	23
ԿԻՐՔ, ՏԵՆԴ	31
ԿԵՍ ՍԵՒ, ԿԵՍ ՃԵՐՄԱԿ	47
ՀՈՂ, ՀՐԱՇՔ	53
ԳՈՒՑԵ ԵՂԵԼ Է ԽԵԼԱԳԱՐ ՄԻ ՍԻՐՏ	65
ՄԵՆՔ ԴԵՌ ԿԱՆՔ	81

ԵՐԳԻՐ, ԵՐԳԻՐ, ՍԱՐԳ

- Երգի՛ր: Երգի՛ր:  
Մարդ:
- Երգում եմ: Քար չկա...  
Մեղքերը դարսվում են իրար վրա,  
Քար չկա...
  
- Երգի՛ր:  
Երգի՛ր, մանուկների երգը...
  
- Մեռելները հուղարկավորների պետք ունեն:  
Քար չկա...
  
- Երգի՛ր  
  
Երգի՛ր:  
- Քար չկա...

Աղմկոտ ժամանակի ծալքերում  
Գալարվում է շունչը մարդկային  
Ծավալվող դատարկության վրա  
Քարձրանում է  
Գիշերվա համբերությունը

Հրաշքը ընդարձակվում է:  
Ես  
Արթուն  
Անթաթ աչքերով  
Մոտեցնում եմ ժամանակը  
Իր վախճանին...

Սպիտակ տառերով  
բոլոր պատերի վրա  
մեկը գրեց  
Խոսիր,  
Խոսիր,  
Խոսիր...  
Մի մարդ, մոլեռանդ կրքով,  
կրքով  
խոսեց...  
Մութի ծանրությունը  
քար դարձած  
ջարդեց աչքի  
բոլոր ապակիները:

Ու մարդիկ խոսեցին:

**Մարդիկ մտածում էին  
ճանապարհների մասին:  
Ես տեսնում էի հեռուն  
որտեղ հորիզոնը հորանջում էր:  
Մարդիկ,  
իրենց սեփական ուղեղը  
դրած սեղանների վրա  
աշխատում էին  
հրաշք ստեղծել...  
Ես տեսնում էի գլխատված  
խլուրդներ:  
Մարդիկ հոշոտում էին իրար...**

**Երկնքում քաղեցի ինձ:  
Հիմա խոսում եմ անցյալի մասին:  
Հոլովում եմ տառապանքը...  
Քամին ծամում է համառ...  
Հոգիս դնում եմ աղեղի մեջ  
Ու նետում  
Աշխարհի ուռչող կրծքին:  
Ի՞նչ է անունդ:  
Աճյունները ունեն քերան:  
Լսո՞ւմ ես:  
Գլխիվայր ցանել եմ մի ծաղիկ:  
Չանձրալի է ծովի երգը:  
Երկինքը շնչում է:  
Մեղք է լուսանում...**



Կախարդանքը մերկանում է  
Քմահաճորեն,  
Մեռնող գեղեցկությամբ:  
Սպասող սովերների հետ  
Քարձրանում է անգույն  
մերկ մի սովեր:  
Ամենաթափանցիկ մաքրությամբ  
Վառում է մի հնչյուն  
Տխուր երազներից  
Դնում է շրթին,  
Ու խելագարօրեն  
Շրջապարում իր հետ...

Արևը ձանձրացած  
Հանում է գույների մի փունջ  
Իր մարմարյա մատներից  
Ու կախում հորիզոնի թևին:  
Չվերջացած մի պաստառ  
Կախվում է երկնքի պատուհանից դուրս:  
Չորացած ծառի թևերից սեկում  
Մի մարդ ներկում է մի ամբողջ պատ  
Ճերմակ  
Ու սպասում արևին:

**Գիշերվա ձեռքի վրա**

**ձեռքերս դրեցի:**

**Քաբախեց,**

**Հառաչեց**

**Ճերմակության դիմաց:**

**Իմ հոգին**

**ձայնի մարմինը գտավ:**

**Իմ ձեռքերը այրվում են,**

**այրվում են**

**հրաշքից.**

**Ջարդվում է մաս-մաս իմ պատկերը.**

**Ոտքերս կծկվում են**

**ավազի վրա:**

**Իմ աչքերը լույսով փակեք:**

**Իմ հոգին**

**տեսնում է մարմինը**

**լույսի:**

**Կանգնել է մի մարդ  
Առանց ձեռքերի  
Եւ աչքերի բռունցքում  
Քոնել է սիրտս:**

**Շղթայաճիչ մի ձայն  
Արմատից արմատ  
Հոսում է արյանս մէջ:**

**Շնչում է ուղեղս արևի փոշին:  
Սիրտս բռունցքի մեջ է:**

Նա լողում է աստղերի  
Քրքիջի հետ:  
Ես տագնապով փակում եմ  
Իմ աչքախոռոչը  
Լվանում եմ թևերս լուսյամբ  
Գլուխս դրած իմ ուսին  
անաչք  
Քայլում եմ մեկ-մեկ  
Գիշերների ճամբով:  
Երկարվում է իմ աչքախոռոչում  
Սահուն մի արձագանք  
Պայթող աստղերի  
Անհայտության կրծքից:

Գու մոտեցար մահիճին,  
Երբ իմ հոգնած աչքերը  
Փակված էին, հանգիստ:  
Գու մոտեցար,  
Քարճրացրիր աչքերիս կափարիչները.  
Լույսը վառեցիր  
Եւ քո աչքերի գրիչով  
Սկսեցիր անիմաստ գծեր նկարել:  
Աչքերս բռռում էին ցավից:  
Գու  
Փակեցիր լուսափեղկը  
և մարեցիր լույսը:

Մի օր

Երբ քո փոքրիկ սենյակում աշխատելիս կլինես

Մեջքդ դեպի լուսամուտը

Ես կգամ,

Կթակեմ լուսամուտի ապակին,

Որը ծածկել ես սպիտակ վարագույրներով

Լույսի

Կամ փողոցի աղմուկի համար:

Գու ոչ մի ձայն չես լսի:

Երբ հոգնած կվերադառնաս

Եւ կաշխատես դուրս մայել լուսամուտից

Իմ մատների հետքը կտեսնես

Ապակու վրայ

Կշփոթվես...

Կբացես լուսամուտը

Աշխատելով գտնել իմ շվաքը,

Որը կախված կլինի

Գիմացի մայթում...

Կվախենաս ինձ կանչել,

Ուղիղ կմայես իմ շվաքին

Նա դանդաղ կհավվի

Իրիկվա լույսի հետ:

Կփակես պատուհանը,

Կվերադառնաս քո փոքրիկ սեղանի մոտ

Եւ ձեռքդ կդնես ծնոտիդ տակ:

Վայրկյանները կանցնեն...

Երբ դրսում ոչ մի լույս չի լինի

Կգամ նորից

Կհրեմ դուռը

Կամաց կմոտենամ մահիճիդ

կնստեմ ափին,

Չեռքս ծնկներիս վրա.

Սիրտս կդողա...

Գու չես նկատի ինձ...

...

Երբ ոչ մի լույս չի լինի սենյակում

Կգրկես մութը

Կհիշես իմ շվաքը դիմացի մայթում...

Ես կհավվեմ մութի մեջ,

Եւ մի կաթիլ լույս

Սպիտակ վարագույրի արանքից

Կշողայ իմ աչքում...

Գու կնկատես...

**Նա քայլում է ուրվականի պես  
մարդկանց հոգիներում  
բռնած աչքերին մի սև դիմակ:  
Փաթաթված գիշերվա սև շղարշի մեջ  
Մտենում է բաց լուսամուտներին  
և հիմարաբար ծիծաղում:**

**Մի գիշեր երբ լույսը թարտում էր  
շապիկից - շապիկ  
Մտեցա լուսամուտին  
և փակեցի փեղկերը:  
Նա եկավ այդ գիշեր  
Գիմակը վերցրեց  
և հեկեկաց:**

**Նույն գիշեր  
Ես հրեցի սև շապիկը  
վերցրի դիմակը  
մտեցրի դեմքիս  
հարդարեցի մազերս  
ցանեցի անուշահոտ հեղուկ  
իմ կրծքին  
փաթաթվեցի մի բարակ լույսով  
և շտապեցի դուրս**

**Երբ հագիվ մի վարդագույն լույս կար երկնքում  
Շտապեցի լուսամուտից - լուսամուտ...**

Մոլորված թռչունի պես  
Թափահարում եմ իմ լեզուն:  
Նա համառ է,  
Ոտքերիս է նայում  
Ու խավարի փլատակներում  
Ստիպում է ինձ գալարվել:  
Լվանում եմ ձեռքերս  
քաշում եմ խավարը,  
Բարձրացնում սառած  
Երկնքի դեմքին  
Ու մխրճվում  
Ուշաթափ...

Մի ակնթարթ էր,  
Գիշերը սանձել է իմ լեզուն...

Տենդով,  
Իմ ձեռքերի տենդով  
Իմ խնդության հետ  
Գու կարող ես երագել  
    -Քաղաքը  
    Անաչք  
    Կախարդված...  
Կիզիչ ամայությունը  
Հավաքիր քո շուրթերով,  
    Իմ տենդով  
Ու դիր քո աչքերը  
-Քաղաքի ծխնելույզների կատարին,  
    Որ պատռում են  
    Կախարդանքը...

Երկինքը մկրտեցի լուսյամբ  
Օձեցի մարմինս  
    կաթով  
Ու ձանձրույթի աղմուկը  
    ծամեցի իմ հոգով  
Խեղդեցի արգանդիս ճիչը,  
Որ խճճվել էր իմ շուրջ  
    Ու ձեռքերիս վրա  
    Տեսա մանուկների հոգեվարքը...  
Օձված շրթունքներով  
Ամփոփվեցի երագներիս օրորոցում  
Եւ անշշուկ մի երգ հյուսեցի:



Ճշում է բերանը իմ բերանին,  
Մշուշոտ աչքերով,  
Ու փաթաթված իր մերկ մարմնի շուրջ  
Խճճվել է իմ ուղեղում:  
Քերանը իմ բերանին  
Իր սրունքներով  
Գիշերն է պատռում...  
Թաթախված իմ արյան մեջ  
Իր արյան հետ  
Մկրտվում է  
Մարդ...

Ժամանակից մի բուռ  
Դնում եմ գիշերվա փեշին:  
Նստում է ժամանակի վրայ  
Ու փակում գիշերվա ճանապարհը.  
Թողեք մենակ...  
Մահիճի վրա կաթող լույսը  
Համբուրում է գիշերվա սպասուհուն:  
Դեմքերին կախվել է ճերմակ մի բառ  
Թողեք մենակ...

Գիշերը մկրտեց ինձ  
աչքիս մերկ սեղանի վրա...  
և ծածկեց մարմինս  
իր նիհար մատներով:  
Լուսաստղը մարմրեց  
երկնքում,  
հավեց մութի մեջ  
Մութը թափվեց,  
թափթփվեց,  
ինձ վրա...

Անշունկ հավում են ձեռքերս  
անարներին  
դատարկ:  
Կիսվում է  
խավարը  
լուսամուտներից  
անկողիների վրա:  
Հավում են ոսկորներս  
ստվերներին  
մեղքը  
ճոճվում է,  
մեղքերը ճոճվում են  
աչքերում...  
Մերկանում է մարմինս դանդաղ...

Ապրում եմ կարճ,  
կախված լույսի անոթից.  
Շարժում կա գուցե:  
Իմ հղությունը  
խաբկա՞նք է...  
կատա՞կ...  
Ձեռքերս խաղում են  
լուսաբացի փեղկերի առաջ...  
Նրանց շրթունքը գուսպ  
սպասել են տալիս...  
Խոսում եմ,  
ես խոսում եմ  
փակ  
կապանքների առաջ...  
Ձեռքերս չեն խաղում,  
փեղկերը փակ են...

Լուսինը կապտաճիչ փշաքաղվել էր  
Ու վազում էր  
Արևից-արև  
Տիեզերքն էր ծեփ-ծեփ դառնում  
Ու տենդոտ ծառերի ճայնը  
Ոտքերիս մատների մեջ էր  
խլրտում...  
Մարմինս գանգատվում էր  
Առավոտյան բարձրացող արևի  
առջև...

Անամպ գիշերվա  
Ապակյա շնչի հետ  
Հեշտանքը թողնում է  
    Սևագգեստ հետքեր...  
Կրծքից սահելով  
Լուսինը ցանում է մի բուռ մարգարիտ...  
Լուսնի հմայքից  
Հպվում են սառը սավանի փեշին...

Շքեղությունը խավարի  
Կանգնել է լուսամուտիս  
    Բճիտ ապակիների առաջ  
    Ու բացել է սրունքները:  
Անհայտանում է մեկ,  
Գալիս է նորից  
Ձեռքերը նիհար  
    Հառաչում են ապակիների վրա...  
Աչքերիս տենդը պարզում եմ նրան,  
Երբում է մեկ  
    Հեռանում նորից  
Կրկին գալիս է  
Պարզում է իր շքեղությունը  
Դեմքս թաղում եմ ճերմակի մեջ  
    Եւ կախված լույսերը մարում...  
Արցունքներիս բյուրեղյա սկիհում  
Գալկանում եմ  
    Լուսամուտիս մօտ...

Լուռ գիշերվա թանձրության մեջ  
Պատյանի միջից պայթում է մի աչք:  
Ճեղքելով արմատվում են  
ծիծաղի ծառեր  
ու չորանում:

Խուլ  
ճոճվում են սավանները  
Տկտր մարմինների վրա:  
Հորանջում է գիշերը  
կարճ  
Ու իր ճաքճքված կրունկներով  
Կանգնում  
Արևի առաջ...

Մի ապակյա  
Սիրտ  
Որոշել եմ դնել իմ սրտի կողքին  
Մատներիս շնչի հպումից նա դողում է կարծես:  
Շնչառությունը հոգնած աչքերիս  
Կենտրոնացել է մատներիս վրա.  
Մի աչք  
Ապակուց շինված  
Ճմռված ժպիտ  
Ու հոգնած մի փայլ.  
Ապակյա մի սիրտ  
Մի ապակյա աչք  
Դողում են կարծես  
Մատներիս շնչից:

Իմ մարմնի շուրջ  
Աստվածները մեղքի վարագույր են կախել...  
Քրմեր են մտքի,  
երգի,  
և սիրո...  
Իմ աչքերը դարձել են նժույգ  
և դոփում են սաթե երկնքի փեշերին...  
Ծառերի ճյուղերը  
թմբկահարում են,  
ծափահարում,  
ծիծաղում...  
Իմ մերկ մարմինը  
դարձել է աստվածների աղոթարանը,  
որտեղ նրանք ապօրինի զավակ են սերմանում:  
Երկինքը առևանգված  
մեղանշում է...

**Կես սև կես ճերմակ  
Հող  
Մի բուռ հող  
միևնույնն է  
Դատարկությամբ լցված  
Մեխվել է ճանապարհը  
ժայռերի ցցուն բերանին:**

**Իսկ այրված հիշողության թևին  
Խաչվել է անսանձ մի շունչ:  
Մի հին տանիք  
տաս երեխա  
Կես սև, կես ճերմակ  
Միևնույնն է...**

Աչքիս արգանդի մեջ  
    Սպասել է  
    Սպասել եմ  
Համբերությամբ  
    Մի մարդ  
    Մարդիկ,  
Որ երկնքում  
    Մի ուրիշ արև  
    երկնի...  
Մինչդեռ իմ արգանդում  
    Սպասել է,  
    Սպասել եմ  
    Մի մարդ  
    Մարդիկ  
Զորության լույսին...

Կրծքումս մի արու  
    Եւ արգանդով էգ  
    Քանդեցի բոլոր  
    Ծալքերը  
    Ապառաժների  
Ու կախված իմ պատկերի առաջ  
Իմ քարե սենյակում  
    Քարե կոկորդով  
    Երգեցի...  
Կես քար, կես արյուն  
    Փորում եմ քար  
    Դարձել եմ քար  
    Քարե կմախք  
    Քարե խիղճ  
Կես արու, կես էգ  
Կես քար, կես արյուն:





**Վերցնում եմ լեռան բաշին ճարճատող  
Երկնքի դեղին փոշուց մի բուռ**

**Ու ցանում մարմնիս:**

**Արևը ճշում է,**

**- Կանգնիր:**

**Կանգնում եմ:**

**Երկարում է ձեռքը,**

**Վերցնում է մարմնիս փոշուց մի բուռ**

**Ու ցանում իր կրծքին...**

**Ես նստում եմ անտառի շվաքի տակ**

**Եւ ցուցամատս դողալով**

**Վազում է դեպի դիմացի հողը**

**Ու գծում մի բառ...**

Ականջը փակում է քարով

Կախում է վզին

Մաշված մի քար

Քարը լսում է քամուն

Քամին ուտում է քար...

Ու ես գլխիս դրած մի տակառ

Հավաքում եմ քար,

Քամի:

Քամին հավաքում է

Քար

Դնում է բոլոր ճանապարհների առաջ,

Դառնում քար,

Ճանապարհի քար...

Հողը իր հողե ամանից

Դուրս է գալիս,

Քամին գրկում է ինձ

Թաց մամուռներով

և սկսում շրջապարել...

Ժամանակը բթամատի վրա կանգնած

դողում է...

Քամին,

քսվում է

դեմքիս,

կրծքիս...

Մարմինս սկսում է ծիծաղել...

Օրը ուտում է մութը,  
Օրը ուտում է հողը...

Երկինքը համառ  
Իր ցուցամատով

շրջանակում է ինձ:

Քնածը արթնանում է,

Մեռածը ծնվում:

Ես շրջանակի մեջ նստած

Մտածում եմ հրաշքի մասին...

Ճշարտությունը

Այլանդակված

Քարբառում է...

Ես ծերանում եմ,

Ոտքերս ծերանում եմ,

Հետքերը կորչում...

Ես շրջանակում

շրջագծում եմ

քրքիջս

միայն...

Մի մարդ

Մի մարդ կապտած

Հողագույն տոթում

Հողագույն թախիծ է հավաքում:

Հողե ծառ, ծառ է կտրում:

Իր հողե ձեռքերով:

Գիշերը կործված իջնում է:

Գլխիվայր է իջնում,

Ձեռքին բռնած

Հողե մի աչք

Փռշակալ մշուշով:

Կործում է իր վրայ,

Շրջում է իր գլխին մի մարդ,

Աչքերում հողագույն մի տոթ

Ու տոթում կանգնած

Մի մարդ:

Գիշերը կես բուռ  
    հող է ցանում ոտքերիս.  
Խղությունը հողի կախվում է  
    կռպերիս վրա,  
Կաթում է լուսինը համը բառերով  
    ու համբուրվում:  
Գիշերը կես բուռ հող է ցանում  
    ինձ վրա...  
Քրքջում եմ:  
Թախիծը,  
    հոգնած ծնկներիս վրա  
    հեկեկում է...  
Գիշերը,  
    Լույսի խնդության վրա  
    Կես բուռ հող է ցանում...

Հազար ձեռքերով,  
Հազար բառերով,  
Փակված բերանով  
    Քամին  
    Չգում է տիեզերքը  
    Չգվում է սերկ:  
Քաղցած ծամում է իր մարմինը,  
Նիզակ է շարտում ապակիների վրա,  
Ծափահարում է,  
    ծիծաղում,  
Գառնում է փշուր-փշուր...  
  
Իմ դեմքի վրա,  
    Քամին թաթախվում է հողով  
    Հողը թաթախվում է քամով  
Ծծում է քամին  
    Փրփուրը հողի...

Ստիպում են ինձ ծիծաղել:  
Գրկել են արևի դիակը  
    Իմ չորս աչքերով  
    Եւ ոսկրոտ բերանով:  
Բղավե՞լ...  
    Ծիծաղե՞լ...  
        ճշա՞լ...  
Շրջանակները մեխում են լուսամուտներից:  
    Բաց նայում են ինձ...  
Գողացող քամու բռունցքում  
    Կա մի շփոթ:  
Շփոթ...  
    Շփոթ...  
        Շփոթ...  
Սենյակում մի պատկեր  
    Քայլում է դանդաղ  
    Հողե աչքերով:  
Գիակը տաք է...

Ափիս մեջ դրել են  
    ճանապարհի երկարությունը  
Ու հոգու վրա իջեցրել  
Միծաղի վարագույրը...  
Ցանում են խոսքեր  
    հանգչող մեռելի դեմքին  
    ու հեռանում...  
Հեռվում, լուռ,  
    ծալում են հողը կրծքիս,  
Խաչակնքվում ճանճրույթի փռշով,  
Ու քայլում  
    ափիս դատարկ ճանապարհով...

Անտարբերությամբ  
Հեծկտում են քունքերս,  
Լվանում են դեմքս հողով:  
Լռություներ սեղմած կոկորդիս,  
Հավաքում են մեկ-մեկ  
արյանս հատիկները:  
Հանդարտ ծնկաշոքում  
շոշափում են հողը,  
Ծածկում են դեմքս սառը մշուշով:  
Ափերիս մեջ զգում են անսանձ մի երգ,  
Որ թպրտում է մատներիս արանքում...

**Գուցե եղև է**

**խելագար մի սիրտ**

**Քարերի անտաշ գեղեցկության հետ:**

**Գուցե արձագանքը նրա**

**Պատարագի ժամին**

**Ապտակել է բոլոր պատերը,**

**Ու նրանց աչքերից ճշացել են**

**Միլիոնավոր աչքեր:**

**Գուցե եղև է**

**Խելագար մի սիրտ**

**Բոլոր ծառերի թաղված արմատներում...**

**Գուցե եղև է**

**Կրակե երկինք...**



**Կարճ**

**Մի աղաղակ**

**Կարճ**

**Երկար շնչով կարճ մի աղաղակ**

**Պատարագի համեստությամբ**

**Չանձրույթ**

**Անվերածնվելի**

**Դեղին տխրություն**

**Մկրտություն**

**Դարձյալ**

**Հոգնած մտերմության**

**Կարճ աղաղակ**

**Երկնքի կրծքին**

**Ու մատներին**

**Դրված**

**Մկրտություն**

**Կարճ**

**Մի աղաղակ**

**Իմ մեջ կա**

**Թռչող երգի գորությունը**

**Աճում է խելագար մի բույս**

**Հոգու սեղանի վրա**

**Շաղել եմ ձեռքերս լույսով**

**Ու հավաքել օրերս իմ շուրջ**

**Թողեք ափիս դնեմ**

**Արթնացող լույսից մի կաթիլ:**

Կերպարանք է ստանում  
Գատարկության աստվածուհին  
Առավտովա մթության հետ...

Արթնանում եմ մի աչքով,  
Իսկ մյուս աչքով  
տանում եմ լույսի  
Սպիտակ գեղեցկությունը,  
մատուցում նրան...

Ես վախենում եմ հալվել արևի լույսի մեջ:  
Երբ քայլում եմ փողոցներում  
Հողը քաշում է ոտերս:  
Ես վախենում եմ հողի շնչառությունից  
Քույսերի աճից  
Ծառերի քաղցած աչքերից  
Արևից  
Հողից  
Ջրից...

Հողը քաշում է ինձ իր հետ  
Արևը այրում է մարմինս  
Ես վախենում եմ...

Աչքերս բոժոժների մեջ

Նոսրանում եմ

ու դառնում

ոչինչ...

Մութը հավաքում է արյանս գնդիկները

Դնում է բերանը ականջիս

ու փսխում

արյուն...

Արյունը թանձրանում է բոժոժում

Սահում է դեմքիս

Եւ այրվում շրթներիս վրա...

Ես հարբում եմ

Խելագարվում

Բացում եմ բոժոժը

ու թաթախվում աչքերիս մեջ...

Գիշերը ծեծում էր ինձ:

Շարտեցի ինձ

Օրվա երկար փողոցի մեջ...

Խաչվել էր ցանկությունը բռունցքներում...

Գիշերը փղձկում էր...

Պարանակապ ոտքերը ճոճվում էին օդում

ու ճաքել էր աչքը...

Մի ծառ հիվանդ ճյուղերով

Մուլում էր ցավից...

Գիշերը ծեծվում էր...

Հիշողության կապանքի տակ փակ

Դրեցի ձեռքերս ծեծված...

Իսկ ես  
Յավի այլանդակ դիակներ եմ կախել  
երկնքից,  
Ու թաղել սպիտակ սրտի մեջ  
Ողբի որբ մարմինը...  
  
Կախել եմ սրտիս շուրջ  
Բզկտված մի երեկո  
Ու դրել թևերիս մատների վրա  
շրթերի դողդոջուն մի երգ...  
Արևի ճյուղերին  
ճոճվում եմ դեռ,  
Դեռ չմաշված  
պատաններ

Գիշերը փաթաթվել է լեզվիս շուրջ  
Ու կապել թևերս կռնակիս:  
Քրքիջը կոկորդիս մեջ է խեղդվել.  
Լեզուս չի խոսում,  
Չեռքերս չեն խաղում,  
Ոտքերս անգոր են,  
Պատը սև է:  
Հողը փորում է իմ խոսքը  
Կոկորդիցս բառեր են հոսում  
Շնչում եմ ծանր,  
Կրկնվում,  
կրկնվում անաղմուկ...  
Փորում են բառերը  
Փորում են սրտերը:  
Հնչյունները  
Թագնված աստղերի փշրանքներում  
Թափվում են իմ դեմքին:

Ձեռքերս քամում եմ գիշերով  
Գնում իմ երազների  
նուրբ ծանրությունը լուսնի ճյուղերին  
Ու փակում աչքերս:  
Բարձրանում եմ ծիծաղի լեռներ  
Ու տարածվում  
հեռու... հեռու...  
Գիշերը կաթում է  
թերիս վրա...  
Լսում եմ նրան  
Փակ ականջներով

Կտրեցին մեկ-մեկ  
Ծառերի բոլոր ճյուղերը  
Ու կախեցին ինձ  
Պայթող գիշերվա թևերից

Գիշերը բռնաց.  
Խճճվեց  
Արյանս թևերում:

Ջարդված անապատի փեղկերին  
Փշրվեցին ձայներ.

Սրտիս բաբախումը իջել է  
Անտառի ծառերի տերևների վրա...

Նրանք էլ չեն դողում:

Կապույտ է երկինքը  
Երկնում է տերևը  
Երկնքում

Եւ իմ սիրտը տերևի վրա  
Թպրտում է...

Աստղերը հագել են սքեմ  
Դառել են արեղա  
Եւ ունկնդրում են  
Տերևի ծնունդը  
Երկնքում...

Խեղդվել է մութից  
Ոլորվում է մի տենդ կոկորդիս  
Պտտվում  
Ոլորվում է անվերջ...  
Արմատվում են աչքերս առաստաղին:  
Մութը  
Իր ճերմակ կրծքով  
հռչում է...  
Անպատյան մի մարդ  
Ժամանակի ձեռքը բռնած  
Խճճվել է իր մէջ,  
Պտտվում է,  
Պտտվում անվերջ...

Մեղա... Մեղա...  
    հազար անգամ մեղա...  
Մտքումս կռապաշտ եմ դարձել  
Մեղա քեզ  
    Խնդությո՜ւն:  
Մառախուղի գորշ օրորոցում  
    Օրորում եմ  
        ի՞նձ:  
Արևը կամաց հալվում է  
    Իմ մեջ  
Լիզում է դեմքս,  
    Մարմինս  
        Ձեռքերս...  
Թողեք անանուն մնամ  
    Օրորոցում...  
Երկինքը ի՞նչ տխրություն ունի,  
Լիզում է դեմքս,  
    Մարմինս  
        Ձեռքերս...  
Երկինքը ի՞նչ տխրություն ունի,  
    Մեղա... մեղա...

**Մենք դեռ չենք հալածվել հողից...**

**Մեր աչքերը կույր խելագարներ չեն...**

**Մեր անհատակ խորությունը**

**Լեռների կիրճերում դեռ չի խափանվել...**

**Մենք դեռ մարդ ենք:**

**Աշխարհը դարձել է**

**հայացքների ցնցուղ**

**Թողեք խոսեն**

**նահատակների,**

**իմաստունների,**

**և երեխաների,**

**թախիծի մեջ ծնված հուշերի մասին...**



Չոհեր  
Չոհեր  
Չոհեր

Քաղաքներ են մեռնում,  
Ծնվում են քաղաքներ...  
Ես ուզում եմ ջարդել ամեն ինչ...  
Արյունս պայթում է երակներում,  
Պայթում են արեգակներ,  
Սրտեր...  
Պայթում է աշխարհը`  
Ռումբ...  
Գիշերը անապավեն է,  
Խավար...  
Գոյությունը պտտվում է  
քառակուսի շրջանակների մեջ...

Չոհեր,  
Չոհեր,  
Անարմատ քաղաքների  
Պատերի տակ:

Կախաղանից իջած  
հողե աչքերի քրտնած հավատքը  
Ինձ ստիպում է գրել  
անկարելին...  
Խեղդված երգը,  
և մուրճի խուլ հարվածները  
հոգիս հավերժօրեն մխրճում են հողի մեջ:  
Իմ բռունցքը  
հողից ապագա է կերտում:  
Մարմինները մաս-մաս  
շնչում,  
գալարվում,  
ապրում են  
հեքիաթների ծանրության տակ:  
Մեղանչել չեմ կարող...

Հորիզոնի գիծը փաթաթեցի ցուցամատիս,  
Աստղերը մոտեցան,  
Երկինքը կնճռոտվեց,  
Լուսինը շճչալու համար  
Երկու ափերով իր դեմքը ծածկեց  
Եւ ծխածանին հեծած իջավ ցած...

Հորիզոնը երերաց մատիս վրա...

Անհաղթելի է:

Հպարտությամբ դողում եմ հաճույքից: